Թորոսյան Ն - Ավանդները շարունակողը – թերթ, «Ժամանակ», Ե., 09.06.2000

Մշակույթի հայկական ֆոնդին առընթեր «Ծիր կաթին» գիտամշակութային միավորման հերթական հավաքի հյուրն էր մի արվեստագետ, որի մասին արվեստաբան, Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանի տնօրեն Հենրիկ Իգիթյանն ասել է. «Հեռվից նա պատկառելի ու բարեկեցիկ մարդու տպավորություն է թողնում, ճանաչված ծնողների զավակ է, բարետես, տաղանդավոր, հաջողակ, որ փայլուն կարիերա է ստեղծել բառիս դրական իմաստով՝ գեղարվեստական հաստատության ռեկտոր, մեծ թվով ցուցահանդեսների հեղինակ: Ամեն բան ճիշտ է, բայց դա միայն սառցալեռան երևացող մասն է: Վայելչատես տղամարդու հաջողականությունը հաստատվել է հազվագյուտ աշխատասիրությամբ, համառությամբ և մշտապես ուղեկցվել է անհաջողություններով ու ողբերգական ապրումներով»:

Խոսքն արդի հայկական գեղանկարչության ինքնատիպ դեմքերից մեկի՝ Երևանի գեղարվեստի ակադեմիայի տնօրեն Արամ Իսաբեկյանի մասին է:

Քառասունութամյա արվեստագետը, սկսած 1976 թվականից, մասնակցել է բազմաթիվ հանրապետական և միջազգային ցուցահանդեսների: Նրա աշխատանքները գտնվում են Երևանի ազգային պատկերասրահում, Ժամանակակից արվեստի թանգարանում, Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում, Էջմիածնի, Հրազդանի, Դիլիջանի Մարտունու պատկերասրահներում, ինչպես և բազմաթիվ անհատական հավաքածուներում:

Տաղանդավոր արվեստագետին ներկայացրեց և նրա կյանքի ու ստեղծագործության մասին հակիրճ խոսք ասաց բանաստեղծ և նկարիչ, մշակույթի հայկական ֆոնդի նախագահ Արևշատ Ավագյանը: Նա մասնավորապես նշեց, որ Արամ Իսաբեկյանը հայրենի գեղանկարչության և ընտանեկան ավանդույթների շարունակողն է: Ծնվել է նկարիչների ընտանիքում: Ո՞վ չի ճանաչում նրա հորը՝ հանրահայտ արվեստագետ Էդուարդ Իսաբեկյանին: Հանգուցյալ մայրը նույնպես նկարչուհի է եղել: Մեծ ուշադրությամբ ունկնդրվեց հյուրի՝ Արամ Իսաբեկյանի խոսքը:

Շնորհակալություն հայտնելով իր անձի և ստեղծագործության նկատմամբ ցուցաբերված հետաքրքրության համար՝ նկարիչը ոչ առանց գոհունակության ծանուցեց, որ իր տնօրինած գեղարվեստական ինստիտուտն անցած ամսվա վերջից անվանափոխվել է և այժմ կոչվում է գեղարվեստի ակադեմիա: Վերանվանումն ավելի համահունչ է հաստատության առաքելությանը: Միաժամանակ ներկաները տեղեկացան, որ այսօր Երևանի գեղարվեստի ակադեմիայի սաների թիվը հասնում է 500-ի: Ակադեմիան մասնաճյուղեր ունի Գյումրիում և Դիլիջանում:

Նկարիչը նշեց, որ ինքը մղումներով հարազատություն է զգում հայկական դասական նկարչության հետ և արվեստի ասպարեզում արել է այն, ինչ թույլ են տվել իր ձիրքն ու հնարավորությունները:

Իրենց ելույթներում Ա.Իսաբեկյանի ստեղծագործությունն ըստ արժանվույն գնահատեցին հանդիպմանը մասնակից արվեստագետները:

Նունիկ Թորոսյան